ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԼԵՌՆԱՄԵՐՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА ЛЕРНАМЕРЦ

N 42
«12» ՀՈՒԼԻՍԻ 2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝ Ա. Ղահրամանյան

Կից ներկայացնում ենք Լեռնամերձի գյուղական համայնքի ղեկավարի 2011թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Առդիր 3 էջ:

Համայնքի ղեկավար՝ Գ. Միրզոյան

ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2011ԹՎԱՌԱՋԻ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«12»ՀՈՒԼԻՍԻ 2011թ. գ. Լեռնամերձ

Հարգելի Լեռնամերձ Համայնքի Բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում ես ձեզ կներկայացնեմ 2011թ.- ի 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին : Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի մասին տեղեկություններ և կխոսեմ համայնքում առկա հիմնախնդիրների մասին : Վերջում կլինի հարց ու պատասխան : Այժմ ես հերթով կզեկուցեմ թե, որ բնագավառում ինչ է կատավել և ինչ պետք է կատարվի:

1. Ֆինանսների բնագավառ :

Համայնքում 2011թվականի1-ի կիսամյակում հավաքագրվել է ընդհամենը 683.6 հազար դրամ գումար , որը կազմում է 1-ին կիսամյակի կատարողականի 75.4 % -ը որից
ա/ Գյուղնշանակության հողի հարկ հավաքագրվել է 470.7 հազար դրամ
բ/ Գույքահարկ հավաքագրվել է 155.3 հազար դրամ
գ/ վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 57.6 հազար դրամ
դ/ Այլ, ոչ հարկային եկամուտ _ _ _ _ հազար դրամ
ե/ պատվիրակված լիազորություն _ _ _ _ հազար դրամ
զ/ Պետության կողմից դոտացյա 2794.5 հազար դրամ

Համայնքում սեփական եկամուտների % -ը կազմում է 75.4 % որը այքան էլ վատ ցուցանիշ չէ, բայց ես կարծում եմ, որ պետք է աշխատանքներ կատարվի , որպիսի հավաքագրումը հասցվի 100% -ի որպիսի բյուջեով նախատեսված ծախսերը կատարվեն ժամանակին և որպիսի տարեկան կտրվացքով որոշակի պարտքեր չգոյանան : Աշխատավարձի գծով պարտք չունենք
Համայնքում կատարված է համայնքի բյուջեի հաշվին հետևյալ աշխատանքները : Որպիսի համայնքի բնակիչները իրազեկ լինեն գյուղապետարանի աշխատանքներից, համայնքում տեղադրվել է թվով 2 ցուցատախտակներ:

1.Հասարակական կարգի պահպանում

Ես որպես համայնքի ղեկավար շատ կարևոր եմ համարում հասարակական կարգի պահպանությունը : Համայնքի բնակիչներից շնորհակալություն եմ հայտնում հասարակական կարգը պահպանելու համար :

2. Քաղաքաշինության բնագավառ

Հարգելի համայնքի բնակիչներ, քաղաքաշինության բնագավառում ես կասեի, մենք շատ թերացումներ ունենք: Խոսքս վերաբերվում է նոր բնակարաններ

կառուցողներին, խնդրում եմ շինություն կառուցելու թույլտվություն ստանալ, վերջապես դա բխում է ձեր իսկ շահերից: Եվ ես որպես համայնքի ղեկավար զգուշացնում եմ բոլոր բնակչությանը շինարարությունը կատարելուց առաջ, կատարել բոլոր փաստաթղթային աշխատանքները հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգով կկասեցվի շինարարության աշխատանքները և տվյալ անձինք կենթարկվեն պատասխանատվության:

3. Հողօգտագործման բնագավառ

Համայնքում չկան հողօգտագործման խաղտումներ: Համայնքի հողերը հսկվում են մեր կողմից: Պահպանված են պատմամշակույթային հողերը:

4. Տրանսպորտի բնագավառ

Կառուցապատված է համայնք մտնող գլխավոր ճանապարհը: Համայնքի ներսում մոտ 1կմ միջհամայնքային ճանապրհը գտնվում է անմխիթար վիճակում:

5. Առողջապահության բնագավառ

Համայնքում չկան վարակիչ հիվանդություններ: Բնակչությանը խնդրում եմ մաքուր պահել համայնքը, որը կարևոր գրավականն է առողջ ապրելակերպի:
ա/ բուժկետից օգտվել են՝ 296 բնակիչներ
բ/ տնային կանչեր 33
գ/ անվճար ուղեգրեր են տրամադրվել 11 այլ բուժ հիմնարկներում ստուգվելու համար
Բուժ կետի աշխատանքները համարում եմ բավարար, չկան բողոքներ:

Համայնքի ղեկավար Վ. Սիրոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1. Գյուղ տեխնիկայի ծեռքբերումլուծումը
2. Համայնքի գազաֆիկացումը
3. Փոստի շենքի բացակայությունը
4. Փարքերը Դրանցում Դեռևս պարզի ստեղծման խնդիրը:

Համայնքի ղեկավար Կ. Միրզոյան